«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում

Հաստատություն՝ Թիվ 140 մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Բելա Ղևոնդյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման ուղղությունները 6

1.1 Սաների մոտ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ընդհանուր նկարագիրը 6

1.2 Ինքնուրույնության, նախաձեռնողականության և տեղծագործական ունակությունների ձևավորումը ոչ ավանդական նկարչության համատեքստում 8

Գլուխ 2. Հետազոտական վերլուծություն 12

Եզրակացություն 16

Օգտագործված գրականության ցանկ 17

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումն այսօր նախադպրոցական կրթության գլխավոր նպատակներից մեկն է: Սաների ստեղծագործական մտածողության, ինքնուրույն գործելու, նախաձեռնողի դերում հանդես գալու կարողությունների ձևավորումն ու զարգացումը դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Վերը նշված կարողությունների բնականոն զարգացումը նախադպրոցականի համար կարևոր հանգամանք է՝ ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու հարցում: Ինչպես հայտնի է, աշխարհաճանաչողությունը սկսվում է ընտանիքում: Երեխան փորձում է ամեն կերպ բավարարել սեփական հետաքրքրությունները՝ անուղղակի կերպով կուտակելով նոր հմտություններ ու կարողություններ: Այս առումով առանցքային է նաև առաջին շփումը հասակակիցների, դաստիարակների հետ, ինչը, որպես կանոն, նպաստում է, որպեսզի երեխան աստիճանաբար ինտեգրվի հասարակություն, բացահայտի իր թույլ և ուժեղ կողմերն ու կայանա որպես անհատ: Կարևոր է նաև խոսքի բնականոն զարգացումն ու վարվեցողության մշակույթի պահպանումը, որոնք իրենցից ենթադրում են դիմելաձև, ծանոթանալու, ողջունելու ընդունված ձևերի պահպանում, ուշադրություն հրավիրելու խնդրանք, ներողություն խնդրել, շնորհավորել:

Երեխայի ինքնուրույնության, նախաձեռնության խթանումը, խոսքի զարգացումն ու ստեղծագործական ունակությունների ձևավորումը նախադպրոցական մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Հենց այս համալիր կարողունակությունների շնորհիվ է տեղի ունենում նախադպրոցականի հոգեկան զարգացումը, սոցիալականցումը, ձևավորվում է նրա ներաշխարհը, ուստի հենց այս հիմնախնդիրների կարևորմամբ էլ պայմանավորված է սույն հետազոտության թեմայի արդիականությունը:

Աշխատանքի նպատակը: Ուսումնասիրել նախադպրոցականների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների դրսևորումները, զարգացման աստիճանը, հնարավոր դժվարություններն ոչ ավանդական նկարչության համատեքստում:

Աշխատանքի խնդիրները:

- Բացահայտել նախադպրոցականների սոցիալականացման ու զարգացման մեթոդական հիմքերը համատեղ գործունեության ընթացքում:
- Հիմնավորել նախադպրոցականների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորման ու զարգացման մանկավարժական պայմանները:
- Հիմնավորել նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալականացման, հաղորդակցական ունակությունների զարգացման, ինքնուրույնության, նախաձեռնողականության, ստեղծագործական ունակությունների խթանման ուղիները ոչ ավանդական նկարչության համատեքստում:

Աշխատանքի օբյեկտը և առարկան: Աշխատանքի օբյեկտ են հանդիսանում սաները, իսկ առակա է հանդիսանում սաների մոտ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման միջոցառումների կազմակերպման հնարքները:

Աշխատանքի վարկածը: Ենթադրվում է, որ դաստիարակի փորձարարական աշխատանքում փոխներգործուն մեթոդների կիրառումը հնարավորություն է ստեղծում, որ սաներն աշխատեն ինքնուրույն, որի արդյունքում զարգանում է սաների ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը հենց ոչ ավանդական նկարչության դասերին:

Աշխատանքի ընտրանքը: Հետազոտության ընտրանք են կազմում նախադպրոցական հաստատության դաստիարակները և սաները:

Հետազոտության մեթոդները.

- Զրույց սաների հետ,
- Փոխներգործուն մեթոդներ:

Աշխատանքի տեսամեթոդական հիմքերը: Հետազոտության իրականացման համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հեղինակների մասնագիտական ձեռնարկները: Հետազոտության տեղեկատվական հիմք են հանդիսացել դաստիարակների կողմից մանկապարտեզում իրականացվող գործնական աշխատանքների արդյունքները:

Աշխատանքի կառուցվածքը: Սույն հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, տեսական և գործնական մասերից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Գլուխ 1. Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման ուղղությունները

1.1 Սաների մոտ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ընդհանուր նկարագիրը

Նախադպրոցական հաստատություններում սաների զարգացման, նրանց աշխարհայացքի ձևավորման նախապայմաններից գրեթե առաջնայինը բանավոր խոսքի զարգացումն է: Բանավոր խոսքին տիրապետում են խոսելու միջոցով, և կարևոր խնդիր է, որ երեխային հնարավորություն տրվի անկաշկանդ խոսելու, արտահայտվելու: Երեխայի համար պետք է անընդհատ ապահովել շփման ու հաղորդակցման համար լիարժեք պայմաններ, հարկավոր է թույլ տալ, որ երեխան իր մեջ կուտակված երևակայությունները, պատկերացումներն ու երազանքներն անպայման արտաբերի: Այսպես մենք չենք նվաստացնում նրա կամարտահայտության իրավունքը, ավելին՝ երեխան ավելի արագ է ինտեգրվում սոցիալական միջավայրին ու գիտակցում իր դերն այդտեղ: Կարևոր է պայմաններ ստեղծել երեխաների խոսքի ոգեշնչման համար, ինչը նրանց խրախուսում է, իսկ խոսքն անհամեմատ ակտիվանում է: Խոսքի ոգեշնչման առկայությունը նշանակում է, որ երեխան ունի ներքին մոտիվացիա արտահայտել իր մտքերը: Դա տեղի է ունենում հաղորդակցության հանգիստ, բնական միջավայրում[1]:

Ծնված պահից երեխային շրջապատում են տարբեր մարդիկ, անշունչ առարկաներ: Երեխային շրջապատող իրողությունը կոչվում է միջավայր: Երեխան մեծանում և զարգանում է կոնկրետ սոցիալ-մշակութային միջավայրում, յուրացնում է տվյալ հասարակության կողմից փոխանցվող այն փորձը, որի կրողներն են այդ հասարակության հասուն ներկայացուցիչները՝ մեծահասակները[2]:

Բանավոր խոսքի զարգացման ամենաարդյունավետ ձևն, անշուշտ, բնական հաղորդակցումն է: Շատ կարևոր է ապահովել բնական հաղորդակցության ձևերի բազմազանությունը երեխայի խոսքի զարգացման գործընթացում: Որքան զարգացած է նախադպրոցականի խոսքը, այնքան նա ավելի ինքնուրույն է, նախաձեռնող ու ակտիվ: Երեխայի ընկալումների առումով հետաքրքիր միտք է արտահայտում խորհրդային

[1] Яшина В. И., Алексеева М. М.,«Теориа и методика развития речи детей», էջ 12:
[2] Մարության Ա. Ա., Դալլաքյան Ա. Մ., «Նախադպրոցական մանկավարժություն», էջ 22:

հոգեբան Լև Սեմյոնովիչ Վիգոտսկին. «Ուսուցման գործընթացների ժամանակային հարաբերակցության և դրանց հոգեբանական հիմքերի զարգացման հարցի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զարգացումը միշտ առաջ է ընթանում ուսուցումից: Երեխան ավելի վաղ է տիրապետում որոշակի հմտությունների, քան գիտակցաբար և կամավոր կերպով սովորում է դրանք կիրառել: Զարգացումը տեղի է ունենում այլ տեմպերով, և ունի իր ներքին տրամաբանությունը»[3]:

Անընդհատ մտավոր գործունեություն կատարող երեխայի միտքը գնալով ավելի կազմակերպված է դառնում, հետևապես նաև խոսքն է լինում տրամաբանված և իմաստալից: Սահուն խոսքը մտավոր բարձր զարգացման արդյունքն է: Այսպիսով, նախադպրոցականի ընդհանուր զարգացման, ինքնուրույնության ու նախաձեռնողականության խթանման, ինչպես նաև մտավոր դաստիարակության խնդիրների համակարգում առանձնանանում է խոսքի զարգացումը: Զրույցը բանավոր խոսքի զարգացման գործնական միջոցներից է: Զրույցի կազմակերպումը ավելի մեծ հմտություն է ենթադրում, քան բուն զրուցելու կարողությունը: Նախադպրոցական մանկավարժության մեջ զրույցը դիտարկվում է որպես շրջակա միջավայրն ծանոթացման, ինչպես նաև կապակցման խոսքի զարգացման ու երեխայի սոցիալականացման միջոց: Այս համատեքստում շատ կարևոր է զրույցի նշանակությունը երեխայի մտավոր առաջընթացի համար, քանի որ այն նպաստում է նախադպրոցականի մտածողության զարգացմանը, օգնում է իմաստավորելու սեփական փորձը, ճիշտ ձևակերպելու միտքը, լսելու և հասկանալու ուրիշի խոսքը:

Նախաձեռնողականությունը նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է: Չէ՞ որ մի բան է տարաբնույթ մտքեր ունենալ, իսկ մեկ այլ բան՝ այդ հանճարեղ մտքերը զարգացնելն ու կյանքի կոչելը՝ ձեռնարկելով հստակ քայլեր: Պակաս կարևոր չէ ինքնուրույնությունը, որի համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն: Մանկության տարիներին ազատ և դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել, հետևել նրա ընտրության սկզբնական քայլերին, սովորեցնել պատասխանատվություն

[3] Выготский Л. С., «Мышление и речь», Москва 1934, էջ 31

կրել սեփական ընտրության համար, միջանձնային շփումներում լինել բարեվարք, հանդուրժող:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ուսուցման երեխայակենտրոն մոտեցումը բավականին խոսուն է ու դաստիարակին հնարավորություն է տալիս լինել ուղղորդող-ուսուցանողի դերում՝ խրախուսելով երեխայի ինքնուրույն ձեռքբերումները: Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են՝ երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը, հետաքրքրությունների բացահայտումը, համագործակցային կարողությունների զարգացումը, անհատական առանձնահատկությունների բացահայտումը, հաղորդակցական ունակությունների ձևավորումը, տրամաբանական մտածողության զարգացումը, ինքնուրույնության խրախուսումը, վերլուծական կարողությունների ձևավորումը: Դաստիարակի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին, իր ունեցած մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից:[4]

1.2 Ինքնուրույնության, նախաձեռնողականության և տեղծագործական ունակությունների ձևավորումը ոչ ավանդական նկարչության համատեքստում

Նախադպրոցական տարիքի երեխայի համար ստեղծագործական ունակություններն անհատական հատկություններ են, որոնք որոշում են ցանկացած ստեղծագործական գործունեության իրականացման հաջողությունը: Ստեղծագործությունը կարելի է անվանել նախադպրոցական կրթության շատ հատկությունների միաձուլումը: Այս բոլոր հատկությունների հիմքը երևակայությունն է և ստեղծագործական մտածողությունը, որի զարգացումը հանգեցնում է նախադպրոցական տարիքում ստեղծագործական ունակությունների բարելավման:

Նախադպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման համար բավականին արդյունավետ միջոցներ ու մոտեցումներ կան նախադպրոցական

[4] Նույն տեղում, էջ 122:

մանկավարժության պրակտիկայում, որոնցից կարելի է առանձնացնել խաղային տեխնոլոգիաների կիրառումը ոչ ավանդական նկարչության ժամանակ: Խաղով ուղեկցվող ուսումնական ու նկարչական պարապունքների ընթացքում, խաղի օգնությամբ կարելի է զարգացնել նախադպրոցականի կապակցված խոսքը, պատկերավոր ու քննադատական մտածողությունը, ինքնուրույնությունը, երևակայությունը: Նկարչական խաղերը նաև միջոց են, որպեսզի երեխայի մոտ ձևավորվեն գործողություններն ու զգացմունքները ինքնուրույն կարգավորելու ունակությունները, վերլուծելու, ստեղծագործելու կարողությունները: Խաղը պետք է կազմակերպվի որպես երեխաների հետ դաստիարակի համատեղ գործունեություն:[5]

Հետաքրքիր խաղային մեթոդ է նաև կիսատ նկարչության շարունակությունը: Դաստիարակը որևէ հետաքրքրական միտք է ասում, սակայն թողնում է անավարտ: Երեխան իր պատկերացրած ձևով պետք է նկարի:: Կարելի է նման կերպ նաև որևէ պատմություն հորինել, որպեսզի երեխայի համար ավելի պատկերավոր դառնան այն նոր բառերը, որոնք աշխատանքի արդյունքում կսովորի: Կարելի է կիրառել նաև ստեղծագործականությունն ու խոսքը զարգացնող խաղ խաղալիքների օգնությամբ: Խաղի համար մեզ անհրաժեշ կլինի մրգերի կամ բանջարեղենի խաղալիքներ, պարկ: Երեխային տալիս ենք բոլոր մրգերը հերթով՝ շոշափի, նկարի յուրաքանչյուր մրգի արտաքին առանձնահատկությունները և այն ցույց տա դաստիարակին:

Որպեսզի դաստիարակը կարողանա սանի մեջ խթանել ստեղծագործական ունակությունները, հարկավոր է երեխաներին չդնել կաղապարների մեջ, թույլ տալ ինքնաարտահայտման, սեփական կարծիքն անկաշկանդ արտահայտելու, ինքնուրույն գործունեություն կատարելու: Նկարչության, երաժշտության, մաթեմատիկայի պարապմունքների ժամանակ շատ հարկավոր է խրախուսել երեխաների ինքնուրույն գործունեությունը, քանի որ հենց նման կերպ կարելի է հիմք նախապատրաստել, որ երեխան անցնի հնարավոր դժվարությունների միջով, տեսնի իրեն շրջապատող գեղագիտությունը, ստեղծագործաբար մոտենա իր աշխատանքին[6]: Կերպարվեստի պարապունքի շրջանակներում կարելի է խնդրել, որ երեխան պատմի իր նկարի մասին, հիմնավորի գույների ընտրությունը, բնության գրկում զբոսանքներից հետո պատմի իր զգացողությունների, նախընտրելի եղանակի, մի խոսքով՝ սիրածի ու չսիրածի,

[5] Ավետիսյան Ժ., Փոթիկյան Գ., Ոչ ավանդական նկարչություն, Եր. 2019, էջ 7:
[6] Հակոբյան Ա., Ոչ ավանդական նկարչությոին եվ դիզայն, Եր. 2022, էջ 11-15:

հասկացածի ու չհասկացածի մասին: Այլ խոսքով՝ հարկավոր է նախադպրոցականին անդադար խոսեցնել, հարցեր տալ, խնդրել, որ երկխոսի, կիսվի իր մտածմունքներով, իր բառերով վերաշարադրի հեքիաթը, դուրս նայի պատուհանից ու պատմի այն , ինչ տեսնում է, առանց դաստիարակի օգնությամբ նկարի, ծեփի, աշխատի կոնստրուկտորներով:

Նախադպրոցական կրթության համակարգը պետք է ուղղված լինի ոչ միայն գիտելիքներով հարուստ, մտավոր գործունեության ընդունակ երեխայի զարգացմանը, այլև նրա անձնային հիմնարար որակների և սոցիալական հմտությունների զարգացմանը: Նախադպրոցական տարիքն առաջին հերթին երեխայի անձնավորության կայացման կարևորագույն շրջանն է[7]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ նախադպրոցականի համար շատ կարևոր է ապահովել ինքնուրույնության մթնոլորտ, որտեղ նա կարող է ինքնուրույն գործել, որոշումներ կայացնել, համագործակցել ընկերների հետ, համատեղ աշխատանքի միջոցով ունենալ հաղթանակներ: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորվում է նախադպրոցական կրթության ոլորտի մանկավարժի դերը, որը կոչված է իրականացնելու մի շարք կարևորագույն մասնագիտական գործառույթներ: Արդյունավետ ու դրական աշխատանքի համար մանկավարժ-դաստիարակը պետք է ունենա մասնագիտական ու մարդկային բարձր որակներ, սիրի երեխաներին: Թերևս այս ամենի ամբողջությունը հաշվի առնելով՝ մանկավարժ-դաստիարակն իր աշխատանքն իրականացնելիս պետք է դրսևորի՝

- Երեխաների հետ տարբերակված աշխատանք կատարելու կարողություն:
- Անհատական աշխատանք երեխայի հետ:
- Աշխատանք ծնողների հետ:
- Նախադպրոցական հաստատություն, երեխա, ծնող կապի անքակտելի կապի բնականոն ապահովում և համագործակցության կարևորում:
- Ընդհանուր զարգացման մակարդակի, երեխաների առանձնահատկությունների գնահատման կարողություն:
- Երեխաների գործունեության գործընթացում նրանց կարողունակությունների գնահատումը իրականացնելու կարողություն:

[7] Ներսիսյան Լ. Ս., Նկարել սովորելու գաղտնիքը.-Եր. Մեկնարկ, 2019, էջ 28:

- Երեխաների հետ անկաշկանդ շփվելու կարողություն:
- Երեխաների ստեղծագործ մտածողությունը խթանելու կարողություն:
- Համընդհանուր բարեվարքության կանոնների ուսուցումը կազմակերպելու և դրանք վերահսկելու կարողություն:
- Բանավոր խոսքի սաղմնավորման և հետագա զարգացման փուլերում այն խրախուսելու, զարգացնելու կարողություն:
- Համակարգված աշխատելու կարողություն:
- Մի շարք մեթոդներ ու հնարներ գործնականում կիրառելու կարողություն:
- Ինքնազարգացում, ինքնակրթություն, բացթողումների շտկում[8]:

Այսպիսով, մանկավարժ-դաստիարակը պետք է փորձի ֆիզիկական, գեղագիտական, բարոյական ու մտավոր դաստիարակության առանցքում դնել երեխային՝ հաշվի առնելով վերջինիս անհատական պահանջմունքները, գիտակցական մակարդակը, կարողությունները, հմտությունները: Երեխաները տարբեր են, տարբեր են նրանց ընկալումները, ցանկությունները, երազանքներն ու վարքը, սակայն նրանք բոլորը ունեն պահանջմունքներ, որոնք հաճախ տարբեր են, ուստի և յուրաքանչյուրի հետ անհրաժեշտ է տանել անհատական աշխատանք, որպեսզի երեխան ունենա բնականոն զարգացում: Պետք է փորձել ճանաչել նրանց, հասկանալ, թե որ կարողունակությունն է նրանց համար դժվար հասանելի ու աշխատել հենց այդ ուղղությամբ:

[8] Алехин А.Д., Когда начинается художник,2-е изд., М. 2020, էջ 15-18:

Գլուխ 2. Հետազոտական վերլուծություն

Ներկայացնենք սեփական իրականացված հետազոտական փորձը, որտեղ օգտագործվել է փոխներգործուն մեթոդ՝ հնարավորություն ստեղծելով, որ սաներն աշխատեն ինքնուրույն: Նմանօրինակ մեթոդներ հաճախակի է կիրառվում սեփական մանկավարժական գործունեության ընթացքում՝ նպատակ ունենալով զարգացնել սաների ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը հենց ոչ ավանդական նկարչության դասերին: Որ ավանդական նկարչությունը նկարչության ձև է, որը չունի սահմաններ և արգելքներ, որտեղ նկարչության գործիք է շրջապատում ցանկացած իր, և որը բացահայտում է երեխայի ներաշխարհը և զարգացնում երևակայությունը, մտածելու և ստեղծագործելու կարողությունները: Նկարչության ընթացքում զարգանում են բոլոր կարևոր ֆունկցիաները՝ տեսողական ընկալում, պատկերացում, երևակայություն, հիշողություն, մտածողություն: Վերջերս շատ լայն տարածում է գտել ստվերային և ջրային նկարչությունը:

Ոչ ավանդական նկարչությունը նախ հնարավորություն է տալիս.

- նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը,
- զգայական փորձի հարստացմանը,
- նախադպրոցականի իմացական գործունեության ակտիվացմանը,
- ստեղծագործական մտքի ակտիվացմանը
- երեխայի ընդունակությունների բացահայտմանն ու անձնային կարևոր հատկությունների ձևավորմանը,
- երևակայության զարգացմանը:

Ոչ ավանդական նկարչության խնդիրներին են պատկանում՝

- գեղեցիկի, արվեստի մասին տարրական գիտելիքների փոխանցումը,
- գեղեցիկին կամ տգեղին հուզականորեն համարժեք արձագանքելու ունակության ձևավորումը,
- գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողությունների ձևավորումը,
- գեղեցիկը ճանաչելու պահանջմունքի զարգացումը,
- գեղագիտական ճաշակի դաստիարակությունը:

Ոչ ավանդական նկարչության ձևերից են.

- մատերով նկարչություն.
- սավանի կամ լաթի վրա նկարչություն.
- սպունգով նկարչություն.
- բանջարեղենով ու մրգերով նկարչություն.
- տերևներով նկարչություն.
- մի շարք այլ առարկաներով նկարչություն և այլն:

Նշված խնդիրներն ուղղված են երեխաների գեղագիտական գիտակցության ձևավորմանը: Հաջորդ՝ երկրորդ խմբի խնդիրները նպաստում են գեղագիտա-գեղարվեստական ընդունակությունների զարգացմանն ու կարողությունների ձևավորմանը: Մասնավորապես.

- Մանր շարժողականության զարգացում,
- Տեսատարածական ընկալման և կողմնորոշման զարգացում,
- Նկարչական ունակությունների ձևավորում և զարգացում:

Անհրաժեշտ պարագաները՝

- Թուղթ
- Գուաշ կամ ջրաներկ
- Ձրաման
- Վրձին
- Լաթ

Թեմա՝ Հ. Թումանյանի «Անխելք մարդը» հեքիաթի ընթերցումը և հետագայում անխելք մարդու և ծառի ու գայլի նկարազարդումը»

Նպատակները՝

✓ Սաներին փոխանցել հեքիաթի բովանդակությունը, տալ գաղափար չարի ու բարու մասին, բացատրել հեքիաթում առկա անծանոթ բառերը:

✓ Սաների մոտ առաջացնել հետաքրքրություն հեքիաթներ ունկնդրելու նկատմամբ:

✓ Գործնական աշխատանքի օգնությամբ ձևավորել թիմում աշխատելու հմտություն:

✓ Զարգացնել մանր մոտորիկան, նկարելու, ծեփելու ունակությունները:

✓ Խթանել երևակայությունը, ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը:

✓ Նպաստել սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Խթանման փուլ: Այս փուլում ընթերցել «Անխելք մարդը» հեքիաթը՝ կիրառելով ստեղծագործական մտածողությունն ու երևակայությունը զարգացնող մի հնար: Երեխան սկսում է ստեղծագործել, երևակայել, հորինել, իսկ արդյունքում զարգանում է նրա ստեղծագործական մտածողությունը: Երբ երեխան սկսում է հեքիաթը պատմել իր տարբերակով, ապա պետք չէ նրան ուղղել: Այսպես, նախադպրոցականի բառային պաշարն է զարգանում, նա սկսում է երևակայական հերոսներ հորինել: Այս եղանակով հեքիաթի ընթերցումից հետո կարելի է կազմակերպել խմբային քննարկում: Քննարկումն ակտիվացնել հուշող, ուղղորդող հարցադրումների միջոցով:

Իմաստի ընկալման փուլ: Գրատախտակին փակցնել հեքիաթի հերոսներին նրանց տալ 15 րոպե ժամանակ հերոսներին նկարելու համար: Երեխաները պետք է մատիկներով նկարեն գրատախտակին փակցված նկարները:



Այդ ընթացքում հետևել սաների խոքին, մոտորիկային, հարկ եղած դեպքում ուղղելով ու շտկելով նրանց: Հաջորդիվ, հոգնածությունը լարվածությունը թոթափելու համար փոքրիկները կդիտեն «Անխելք մարդը» մուլտֆիլմը, իսկ ընթացքում մոնիտորի վրա ցուցադրել նախօրոք պատրաստած տեսասահիկը՝ հեքիաթի գլխավոր հերոսների նկարներով:

Կշռադատման փուլ: Այս հատվածում սաների տալ նոր առաջադրանքներ՝ Պատրաստել նկար «Անխելք մարդը» հեքիաթի շուրջ:

Եզրակացություն

Այսպսիով, կատարված հետազոտական աշխատանքի արդյունքում հանգել ենք այն եզրակազցման, որ ընտրված աշխատության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում: Սակայն մի բան հստակ է, եթե մենք նպատակ ենք դնում զարգացնել նախադպրոցականի խոսքը, ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ որոշակի կոնկրետ գոտում նա ունի իր հետաքրքրությունները, առանձնահատկությունները: Երեխայի այդ պահանջմունքները բավարարելու համար դաստիարակը պետք է կուտակի նորանոր հմտություններ ու կարողություններ, որպեսզի արդյունավետ աշխատանք տանի: Դաստիարակը պետք է երեխաների շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ, որպեսզի նրանք մեծանան նախաձեռնող, մտածող, ստեղծագործող և ինքնուրույն:

Բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը թույլ կտա, որ երեխան ժամանակի ընթացքում ինտեգրվի հասարակություն ու նախաձեռնողի դերում լինի, ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել նախադպրոցական հաստատությունից դուրս: Դաստիարակը զանազան մեթոդների կիրառությամբ պետք է փորձի հարստացնել նախադպրոցականի բառային պաշարը: Ոչ ավանդական նկարչության պարապունքների ժամանակ հարկավոր է անդադար զրուցել նրա հետ, լսել նրա մտահոգությունները, պարզաբանել այս կամ այն երևույթի մասին նրա հուզող հարցերը: Այսպիսով, դաստիարակը հիմք է նախապատրաստում, որ առաջիկայում նախադպրոցականն ունենա առաջընթաց ու կարողանա ձևավորել կապակցված խոսք, լինի ավելի ինքնուրույն ու կազմակերպված:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Ժ., Փոթիկյան Գ., Ոչ ավանդական նկարչություն, Եր. 2019.
2. Հակոբյան Ա., Ոչ ավանդական նկարչությոին եվ դիզայն, Եր. 2022.
3. Մարության Ա. Ա., Դալլաքյան Ա. Մ., ս «Նախադպրոցական մանկավարժություն», Եր. 2017.
4. Ներսիսյան Լ. Ս., Նկարել սովորելու գաղտնիքը.-Եր. Մեկնարկ, 2019.
5. Алехин А.Д., Когда начинается художник,2-е изд., М. 2020.
6. Выготский Л. С., «Мышление и речь», Москва 1934.
7. Яшина В. И., М. М. Алексеева,«Теориа и методика развития речи детей», М. 2011.